ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

23.08.2013թ.
209-ի 6

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի
նախարար պարոն Արտեմ Ասատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ասատրյան,

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության ծառայության Մալաթիա-Սեբաստիայի տարածքային բաժնի շենքը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող (հենաշարժողական խնդիրներ ունեցող) անձանց համար: Ավելին, Մալաթիա-Սեբաստիայի տարածքային բաժնի շենքում սպասող տասնյակ ծերունի թոշակառուները իրենց հերթում սպասելիս հնարավորություն չունեն անգամ նստելու, քանի որ չկան նստարաններ կամ աթոռներ, ինչը ոտնահարում է նրանց տարրական իրավունքները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունը.

1. Ե՞րբ է ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության ծառայության Մալաթիա-Սեբաստիայի տարածքային բաժինը ապահովվելու նստարաններով կամ աթոռներով ծառայությանը դիմած թոշակառուների տարրական սպասարկումն իրականացնելու համար:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան